

WORKS OF DR.

Փետրուարի 28-ին՝ շաբաթ օր, վեհափառ
Հայրապետը Մայր տաճարում՝ սովորական
հանդիսով եպիսկոպոս ձեռնազրեց Երուա-
ղէմի Ս. Յակովիքեանց հայոց վանքի միարան-
կ պատրիարքական փոխանորդ Կ. Պալումը,
արժ. Գեորգ ծ. վարդապետ Երիցեանին։ Պա-
տարագիչն էր Գեր. Գրիգոր եպ. Գառնակերեանը,
իսկ Խարաւառւիլակ՝ Գեր. Մակար եպ. Բար-
խուռդաբեան Ձեռնազրութեան խորհուրդը
աւարտելուց յետոյ Նորին Ս. Օծութիւնը,
յիշեցնելով որ Նորընծայ եպիսկոպոսի մատը զը-
րած մատանին՝ «Ար ոչ ժողովէ ընդ իս—ցրուէ,
տէրունական խօսքը կրում էր իւր վերայ իրեւ
մակադրութիւն, նոյն բնարանով մի իմաս-
տալից յորդոր կարգաց՝ առ հասարակ եպիս-
կոպոսի հովութիւն մասնաւորապէս ներկայ Սըր-
բազանի պարտականութիւնները բացայատեց։
Յաջորդ կիւրակէ օրը նախնաւանդ սովորու-
թեան համաձայն Գեր. Գեորգ եպիսկոպոս իւր
անդրանիկ պատարազը մատոց Մայր տաճա-
րում, բայց սեղանի վերայ Նոյն օրը նորըն-
ծայ սրբազանի նույիաբերութեամբ հանդի-
սաւոր հացկերոյթ էր պատասպարան գտած
մաշ Մայր աթոռում՝ պատսպարան գտած
զազթականների համար։ Հրաւիրուած էին
նաև ծեմարանի ուսուցիչները։ Ծաշի միջոցին
Ն. Բ. Սրբազնութիւն Սուքիաս արքեպիս-
կոպոսը ջերմազին բարեմաղթութիւններ ա-
րաւ Միաբանութեան կողմից՝ հեռաւոր եղ-
րայրակից միարանութեան սոյն անդամի հա-
ւատարմական զգացումներով Մայր Աթո-
ղիմելուն և եպ. բարձր տատիճան ընդունե-
լուն առթիւ, որին ի պատասխանի Գեորգ
սրբազան զգացուն խօսքերով արտայատեց
իւր ուրախութիւնը, որ՝ մանկութենէ, ի վեր
։ Յակորեանց վանքին մէջ պատսպարան զըտ-
նելուց և միշտ հաւատարմութեամբ ծառա-
յած լինելուց յետոյ, այդ օրուանից մի ա-
ւելի մէծ միարանութեան անդամ է գառ-
նում և, աւելի ընդարձակ պարտականու-

թիւնների հետ նոր եղբայրներ, նոր քսջա-
լերութիւն, նոր բարեկամութիւն գտնում
ուխտելով նոյն հաւատարմութիւնը պահ-
պանել և այսաեղ: Սորին Սրբազնութիւնը
մեխնեց Մայր Աթոռից երկուշարթի ճաշից
յետոյ, զրեթէ ամքողջ միաբանութիւնը ժա-
դովուած էր ճանապարհ գնելու համար: Գե-
որդ սրբազն ամենանպաստաւոր տպաւորու-
թիւն է թողել ամենքի վերայ: յոյս ունե-
նանք, որ կիրականանան իւր վրայ գրած
յոյսերը և, շատ ժամանակ չանցած, աշքի
ընկնող աեղ կը զրաւէ նա չայ. եկեղեցւոյ
եպիսկոպոսաց խմբին մէջ:

Մեծի պահոց կիւրակի երեկօները Մայր
տաճարում միշտ քարոզ է լինում: Երբորդ
կիւրակի ին (Անտառակի) քարոզ խօսեց Վե-
հափառ Հայրապետը. խօսքը մեղքի մասին
էր: Սորբին Ս. Օծութիւնը առանձնապէս
մատնանիշ արաւ այն ընդհանրացած սիալ
հայեացքը որով ժողովուրդը ժամանակը եր-
կուսի է բաժանել՝ ժամանակ մեղք գործելոյ
և մեղքերը քաւելոյ ժամանակ. մինչեւ վլր-
կութեան աւետարանը միշտ արթուն և պատ-
րաստ լինել է պահանջում: Ապա բացատրեց
անսուակ որդու առակը: Վեհաստիճան քա-
րոզիքը խօսում էր ըստ սովորականին պարզ
և ամէնքին հասկանալի լիզուով. առակի գը-
ժուար մասերը բացատրելիս միշտ մէջ էր բե-
րում մեր ս. հայրերի տուած իմաստալից
մեխութիւնները, մանաւանդ Շնորհալի մէջ
հայրապետի խորազգած շարականների հա-
տուածները:

Զորբորդ կիւրակէին (Ծնաեսի) երեկոյեան
վեհափառ Հայրապետը քարեհամեց գնալ վա-
ղարշապատի ծխական եկեղեցին քարոզելու:
Վեհի քարոզը լսելու համար այնքան բազ-
մութիւն էր հաւաքուելի որ եկեղեցում տեղ
շնչնելու պատճառով շատելը գուրսը մնացին
Նորին Սրբութիւնը յիշեց նաև, որ հայ-
րապետական աթոռ բարձրանալուց ի վեր ի՞ն

վերայ ծանրացած մի պարտք էր համարում Աթոռին այսչափ մօտ եղող Վաղարշապատի համայնքին այցելել և հոգեպետ միտիթարել: Ասպա այստեղից խօսք առնելով, բացատրեց մեր առ Աստուած, առ թագաւորն և առ ընկերն ունեցած պարտաւորութիւնը: Վերջին մասի մէջ յորդորեց Վաղարշապատացիներին չզականացնել իրենց գութն ու խնամքը աղքատ գաղթականներից, շարունակել օղնել և պատրապարել նոցաւ մինչև որ մի ողորմութեան դուռ բացուի:

Բացի Վեհափառ Հայրապետից, Մայր տաճարում մինչև այժմ քարոզ են խօսել Տ. Սուքիա արքեպիսկոպոսը՝ (Թ. կիւրակէին) և Տ. Մակար եպիսկոպոսը (Ե. կիւրակէին):

Իսկ Վաղարշապատի եկեղեցում քարոզել են մինչև այժմ արժ. Եղիս և Աշոտ վարդապետները՝ թ. և Գ. կիւրակէներին առաւօտեան, Արժ. Մեսրոպ և Կարապետ վարդապետները և Բար. Գարեգին արեգան յաջորդ շարաթ երեկոներին: Վարդապետներից մի քանիսը ու Էջմիածնի շրջակոյ զիւղերումն են քարոզ խօսել, իսկ Արժ. Միոն վարդապետն ուղարկուած է Սուքմալուի զաւառը նոյն նպատակով:

Վեհափառ Հայրապետի զիւանից սատրած թ. 385 պաշտօնական զրութեամբ՝ հրամայուումէ Արարատի ներկայ համարում լոյս տեսնող ծրագրի համաձայն շարունակել այսուհետեւ մեր ամսաթերթի հրատարակութեան գործը:



ՄԱՀԱՑՈՒՑԱԿ. *

Վ.ԱՐԴՅԱՆ Վ.ԱՐԴՅԱՆԻ Վ.ԱՐԴՅԱՆԵԱՆ



Փետրուարի 16—17-ի զիշերը 8մին-սում, թռքերի բորբոքումից կնքեց իւր մոհկանացուն Սանահնի վանահայր Վարդան վարդապետը, 68 տարեկան հասակում:—Հանգուցեալը իւր սկզբնական կրթութիւնը ստացել է ս. Գեղարդի վանքում, 1872 թ. մայիսի 20-ին ընդունուել է միարան նոյն վանքի և սորհաւագութեան աստիճան է ստացել Մըրկարի եպիսկոպոսից: 1875 թ. մարտի 10-ին Երևանի եպիսկոպոսը Սևանում նորան կուսակրօն քահանայ է ձեռնադրել: 1876 թ.-ին հոկտեմբերի 25-ին կարգուել է նա վանահայր ս. Գեղարդի վանքի. 1881 թ.-ին վարդապետութեան մասն, աստիճան է ընդունել: 1894 թ. ապրիլի 22-ին փոխադրուել է իրեն վանահայր Սանահնին, իսկ 1897 թ. գեկ 10-ին նորից կարգուել Գեղարդի վանահայր, որի կալուածները ձեռք ձգելու համար հանգուցեալը շատ է աշխատել: Իւր մատուցած ծառայութիւնների համար ստացել է 1883 թ.-ին ծաղկեաց Փիլոն և 1888 թ. վարդապետական ականակուռ լանջախաչ:—Ի լոյս երեսաց իւրոց հանգուցէ Աստուած վաստակաւոր մըշակի հողին, և օրհնէ ու պաղարեր դարձնէ նորա աշխատանքը ս. Գեղարդայ վանքի վերաց, որի համար զբեց նա իւր անձը:

ՊՕՂԱԾ Վ.ԱՐԴՅԱՆԻ Վ.ԱՐԴՅԱՆԵԱՆ

Մարտի 11-ին լոռ—Վիրապում ի 8էր հանգեաւ Պօղոս վարդ. Մալիսասեանը, 70 տարեկան հասակում:—Հանգուցեալը ս. Էջմիած-

նի ամենաշին միաբաններից էր, իւր կոթու-
թիւնը ստացել էր ժառանձրություն գպրոցում
որտեղ և յետոյ վարել է ահեղի ու չայց
լեզուի ուսուցչի պաշտօն։ Միաբան է ընդու-
նուել նա 1853 թ. յունիսի 15-ին։ 1856
թուին ստացել է դպրութեան և 1857-ին
սարկաւագութեան աստիճան։ 1870-ին կու-
սակրօն քահանայ է ձեռնադրուել և 1868-ին
վարդապետութեան մասն աստիճան ընդու-
նել։ Հանգուցեալ վարել է Մայր Աթոռուու
կրտսեր լուսարարի և մնաեսի պաշտօննե-
րը։ Վանահայր է եղել ու Հոկտեմբերի ու Շում-
մա առաքելոյ և Խորհրդապի վաներերուում։

1861թ. Երջանկայիշասակ Մատթեոս
կաթոլիկոսը պարզեատրել է նորան վարդա-
պետական լունջախտչով: Մատթել է նաև պետ-
չքանչաններ:—Հանգուացի՛ Տէր զհոգի բազ-
մանեայ պաշտօնեին ի լոյս երեսաց Խերոց:



ՀԵՄԱՐՄՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԵՅ

Ո Նկատի ունենալով՝ որ վետրուար ամ-
սի վերջերին, երբ պահոց օդեր են՝ զալիս և
եղանակի մէջ և խիստ փոփոխութիւններ են ահ-
ղի ունենում՝ ծեմարանի սաների՝ առաջա-
կան դրութիւնը սովորաբար զգալի կերպով
ընկնումէ, վարչութիւնը կարգադրել էր բո-
լորին կրկին միանդամ բժշկական քննութեան
ենթարկել: Քննութիւնը ցոյց տաւեց որ յի-
ւաւի բազմաթիւ աշակերտներ արեան պա-
կասութիւն ունին կամ սկզբը ուն կոչուած
ակադութեան նշաններ են ցոյց տալիս, որոնց
ուստի առաջնական համար հարկաւոր էր զիսա-
ւորագես կերակրեղէնների մէջ բարեփոխու-
թիւն մոցնել: Ծեմարանի պ. բժշկի, վարչու-
թեան միջոցավ, վեհափառ Հայրապետի բարե-
հած ուշադրութեան ներկայացրած զեկուց-
ման համաձայն՝ Սորին Սրբութիւնը հրամա-
յեց անմիջապէս միջոցներ ձեռք առնել բա-
ւականութիւն տալու բժշկութեան պահանջ-

Ներին, որչափ հնարաւոր էր այդ՝ հարկաւ առանց աւանդական կարգերը խանգարիլու։ Այնուհետեւ վանական կառավարութիւնը՝ նաև խագոհ դեր։ Սուքիաս արքեպիսկոպոսի արթուն հսկողութեան շնորհիւ, ամեն հոգ տարաւ, որպէս զի վանքի սեղանատանը կերակուր ներ պատրաստուին լիասատ չափով, ծեմարանից ներկայացրած ցուցակի համեմատ, և արտաքոյ կարգի սնունդ արուել այն աշակերտներին, որոնց համար անհրաժեշտ կան անէ, որ բժիշկը, ծեմարանի վարչութիւնն իւր կողմից մի քանի թեթև փոփոխութիւններ մրացրեց աշակերտների սնունդի և պարապմունքների մէջ, և այսպիսով կարելի եղաւ կարձմիջում շատ մի իմարական հետեանքների հասնել։ Այժմ առողջական դրութիւնը ծեմարանում ըստ ամենայնի գոհացուցիչ է, աւելի գոհացուցիչ դրութիւն արուել այս Միջանում հազիւ թէ երբեք եղել է։ Աշակերտներն ընդհանրապէս զուարթ են և պարապում են եռանդով։ Հիւանդանոցում 2-3 թեթև հիւանդներ կան և միայն մի ծանր հիւանդ։ Վերջնոյս վիճակը տասն օր առաջ Երեւանից խորհուրդի կանչուածք բժիշկը զրեթէ անյուսալի էր գտնում։ Բայց Աստուծոյ ամենաառատ օգործութեամբ և ծեմարանի ապ. բժիշկի եռանդուն ջանքերի՝ առհասարակ հիւանդի մասին տարուած անդուլ խնամքի շնորհիւ, նորա վիճակն այնչափ բարելաւած է, որ մեծ յօյս կարելի է ունենալ, թէ ծեմարանական ընտանիքն այս տարի եւ, ահա չորրորդ տարին։ առանց սուզի պէտք է անդնել։



Ս. Հուսաւորչի «Մռանի ի վիրապ» տօնը
սովորականից աւելի հանդիսաւ որ կերպով կա-
տարուեցաւ այս տարի Ծեմարանում որպէշե-
աւել վեհափառ Հայրապետը բարեհաճեց ներ-
կայ գտնուել առնիւ առթիւ պատրաստած ե-
ռեկոյթին: Որոշուած էր երեկոյթ կազմել ո-
լուսաւորչի անուամբ մնացած երկերի և աւան-
դութիւնների, կամ նորա անուան նուիրած
յիշատակարանների շետագոտութիւններով:

որոնց մեծ մասը լսարանական ուսանողների տարբեկան շարադրութեանց նիւթ էր եղել: Երբ Նորին Սրբութիւնը անակնկալ կերպով ցանկութիւն յայտնեց պատուել հանգեսը իւր ներկայութեամբ, հարկ եղաւ պատրաստի նիւթերի մի մասը կրծատել՝ ձանձրոյթ չպատճռակելու համար: 2 սարկաւագ և մի Բ. լսարանի ուսանող խօսեցին և կարգացին իրենց զրածները: ապա աշակերտներին ուղաք մի համառօս յորդորով ամփոփեց հանգեսը զեկավարք Բարեն: Գարեզին արեղայն: Վեհափառ Հայրապետը իւր բարձր գոհունակութիւնն յայտնելով և որհնելով՝ ցանկացաւ, որ կարգացած նիւթերն իրեն ներկայացուին: բացարեց միանգամայն, թէ այսպիսի մեծ յիշտակիներ վերակենդանացնելու համար, ըրչափ նշանակութիւն ունի նոցա կատարման տեղում գտնուել: ուստի և բարեհամեց որոշել եթէ Տէրը յաջողի՝ «Ելին ի վիրապէն» տօնը խուռն բազմութեամբ Խոր վիրապ զնալով, այնտեղ կատարել:

— առաջու —

ԾԱՌԱՋՈՒՆԻ ՄԱՐՏ

Մայր Աթոռի Հոգեօր Ծեմարանի վարչութիւնն յայտնումէ ի զիառութիւն հասարակաց, որ Ծեմարանիս մէջ որդեղրներ պահելու յանձն առած են հետեւեալ պարեպաշտօն ազգայինք:

1. պ. Առաքել ծառուրեան իւր անունով պահում է երեք որդեղիր, որոնք են՝ Կարապետեան Սաեփան, Դանիէլեան Արդար և Միքարեան Յակով:

2. Տիկին Աննա Աթամալեան իւր ամուսին Միքայ Աթամալեանի յիշատակի համար մի որդեղիր, որ է Գեղամեան Վարդգէս:

3. Տիկին Շողակաթ Մելիքեան իւր անունով մի որդեղիր, որ է Վելքիւեան Անդրեա:

4. պ. Նիկողայոս Խղմիւեանի անունով մի որդեղիր, որ է Միկիթարեան Խաչատոր:

5. պ. Խաչակ Ժամհարեան իւր անունով մի որդեղիր, որ է Քրիստափոր Տէր Միքելեան:

և 6. Բագրու Մարգարիտական Լոկ բութիւնը պահում է մի որդեղիր, որ է Եղիա Տէր Յովհաննիսեան:

Բացի այս, Ծեմարանիս մանկավարժական խորհուրդը զանազան կատաւանդութիւնների հիման վերայ ընտրեց հետեւեալ որդեղիրներին:

7. Բարեյիշատակ բժիշկ Գեորգ Տիգրանեանի անունով երեք որդեղիր, որոնք են՝ Քիւրդիս Նիկողայոս Աքքիրմանցի, Վասուեան Վլաս Եղեասցի և Փաերեան Եղիազար Զարարցի:

8. Բարեյիշատակ Թումայեան ամուսնոյ անունով մի որդեղիր, որ է Մուրատեան Սահակ Մատրասեցի:

և 9. Բարեյիշատակ Գեորգ Ղալայեանի անունով մի որդեղիր, որ է Մուրատեան Սահակ Մատրասեցի:

Նմանապէս Վեհափառ Հայրապետի ծայրագոյն բարեհամարթեամբ ուղարկուած է Կիրիկ, և, Վլագիմիրի Կայսերական համազարանն, ուսման մէջ կատարելագործուելու Ծեմարանիս սաներից շնորհ, Մուշեղ սարկուագ Տէր Գարբիելեանի ըրեւ որդեղիր բարեյիշատակ Գեորգ Փրիդոնեանցի:

Մայր Աթոռի Հոգեօր Ծեմարանի Վարչութիւնն այսու յայտնում է ի զիառութիւն հասարակաց, որ բարեյիշատակ բժիշկ Գեորգ Աւետիքեան Տիգրանեանց իւր կատուով, որ հաստատուած է Տագանրոզի Նահանգական դատարանում 1894 ամի փետրուարի 17-ին, աւանդել է Ծեմարանիս Վարչութեանը կատարել, ի թիւս այլոց, հետեւեալ պարտականութիւնները:

... Կատակի 4 յօդուածով որոշուած է Հինգ հազար ռուրլի որի տոկոսիքով պետք է տալուին հայերէն գասազրքեր և ձրիաբար բաժանուին չքաւոր հայ երեխաներին:

Է. Կատակի 7 յօդուածով որոշուած է երկու հազար ռուրլի իրրե մրցանակ այն հեղինակին, որը կը կազմէ եւ կը տպէ հայերէն լեզուով Հայոց արմատական բառերի բառարան:

և Գ. Կատակի 8 յօդուածով որոշուած է երկու հազար ռուրլի իրրե մրցանակ այն հեղինակին, որը կը կազմէ եւ կը տպէ հայերէն բառարան Հայոց համանիշ բառերի:

Մայր Աթոռի Հոգեոր Ծեմարանի Վարչութիւնն այսու պատիւ ունի հրատիրելու ձեռնշաս անձինքներին մինչեւ մէկն յունուարի 1899 ամի ներկայացնել Վարչութեանը իրենց պատրաստի աշխատութիւնները՝ թէ դասազրքերն եւ թէ բառարանները՝ կատակի տրամադրութեան համեմատ քննելու ու անօրինելու համար:



ՄԱՏԵՆԱԳԻՒԹՅԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՑ.

Մայր Աթոռի Մատենագիւթանի համար շնորհակալութեամբ տոացել ենք հետեւեալ գրքերը.

Հրատարակական ընկերութիւնից.

1. Յ. Պարոնեանի Ազգային Քոջեր. երկու տող. Թիֆլիս 1896.
2. Աննենակայեա—Դասընկերներ. պատանիների ընթերցանութեան համար. թարգմ. Դիւնազարեանցի. Թիֆլիս. 1897.
3. Շելսալիրի—Ռոմեո և Ջուլիետ. թարգ. Յովհ. Խան Մատենական Թիֆլիս. 1896.

4. Պրաֆ. Մողեստ Բօղդանովի Խճռողներ. թարգմ. Լեսն Մելիք—Ագամեանց. Թիֆլիս. 1897.
5. Գիլի ղը Մօպասանի. Վրեժ և հիւանդապահ աղջիկը. թարգմ. Լեսն Մ. Ա. Թիֆլիս. 1896.
6. Հ. Ռուբակին. —Զրոյցներ բնութեան մեծ և ահեղ երեսյթների մասին. թարգմ. Մ. Տեր-Անդրեասեան, Թիֆլիս 1896.
7. Վանդիմիր Կոոլբնիկո—Ակոմայ Մարդասպան. թարգմ. Տ. Յովհաննիսեան, Թիֆլիս. 1896.
8. Ուլիմա-Մուվլու. թարգմ. Յովհ. Օհաննեան.
9. Պ. Ս. Մառի քննադատական յօդուածը Շնորհ. դպիր Գալուստ Տ. Մկրտչեանցի Ակամանգեղոսի Ազրիւրներից Յիշատակ գտակինքաց Դորիա և Շմենի վկայից որ վկայեցին յուռհատ գրքոյի, արտադպութիւն №3 և 4 1897թ. Վիզանտիйскій Временникъ ամսաթերթից. Սուեր հեղինակից:
10. Պ. Ս. Քամուեանից—Արժ. Տ. Գարեգին վարդապետ Մաթունեանցի ձեռքով երկու օրինակ Համարաբբառ Հին և Նոր Կատակարանաց, աշխատասիրութիւն Թաղէու վարդապետի Աստուածատուրեան. Երուսաղէմ. 1895.
11. Ա. Պուշկին. Կապիտանի աղջիկը. թարգմ. Յ. Կարապետեանի. Ազեքսանդրապոլ. 1895.
12. Մակ. Չմշկեանի Պատկերազարդ—լիակատար Տարեցոց 1898թ. —Աշխատասիրողից:
13. Ետոды по Армянской Дialectологии, Левона Мсерянца. Часть I. Москва, 1897. Սուեր հեղինակից:

14. Сборникъ Статей учениковъ профессора барона Виктора Романовича Розена. С. Петербургъ, 1897. Սուեր Պ. Ն Մատից.

Հասցե. Բиблиотекъ Эчміадзинскаго Монастыря.

Մ ա տ ե ն ա գ ա ր ա ն ա պ ե ա

ԳԱՐԵԳԻՆ ԱԲԵԳԱՅՑ ՅՈՒՍԻՓԵԱՆ

ՏԱՇԿԱՆՑԱՅՔ



Իզմիրէ կդրեն թէ Փետր. 8ին վայելու չանձեսով կատարուերէ Գորտէլիոյի Սահակը արդու հեան նորակառոյց վարժարանին բացումը, նախագահութեամբ Առաջնորդին, Եյս գպրոցին գետինը նուրիրած է Միջան էֆ. Խփլիկնեանի ի յիշատակ իր վաղամեսիկ ամսւանոյն։ Ըենքը կառուցած է Աւետիս էֆ. Աւետիքեանի ի յիշատակ իր ճնդաց։ Աւետիքեան Սահակ աղայի և Տիկ. Վարդուհի Ս. Աւետիքեանի Գպրոցին Տիորէն որոշուած է Գ. Տեր-Բարթողիմէոսին էֆ., նախորդ տնօրէն Իզմիրի աղդային երկուեռ վարժարանին։

— 8. Մեսրոպ արքեպիսկ. 14 Փետր. ի Մոյր Եկեղեցի պատարագ մատուցանելով կուսակրօն քահանայ ձեռնադրեց Մկրտչեան Ստեփան աւադսարհաւագն որ կոչուեցաւ Տ. Կարապետ Արեգայ, Տ. Կարապետ Արեգայ ձեռնադրուեցաւ Կիւմիւշչանէի Ս. Փրկչի վանուց վրայ։

— Պատրիարքարանի կողմէ յանձնաբարուած էր Կարնոյ աղդայիններէն Տէր Ազարեան Կարապետ էֆ. ի քննել Կարնոյ Կարմիր վանուց մէջ հաստառուած Արքանցի վիճակը, Տէր—Ազարեան էֆ. իր քննութեան արդիւնքը տեղեկագրած է Ս. Պատրիարքին։ Կառաջարէկ ոչ միայն պահէլ Կարմիր վանքին մէջ արդէն բացուած Արքանցն, այլև Կարնոյ քաղաքին մէջ ուրիշ Արքանոց մ' ալ հաստատել։ Ս. Պատրիարքն հարկ եղածն տնօրինեց։

— Պալլքուէրի առաջն. Տեղապահ Յակոբեան Տ. Վահան Ռ. է չորրորդ տեղեկագիր մ' ալ հասաւ ի Պատրիարքարան, որմէ կիմացուի թէ երկրաշարժի զօրաւոր ցնցումները մերժ ընդ մերժ կշրունակուին, և աւերներ կափան։ Երկու Հայ ևս փլատակաց ներքեւն հանուած են։ Աղդային կալուածները նորոգուելու համար առ նուազն 500

ոսկի, եկեղեցւոյ տաճարին և երկու աւանդատուներու վերանորոգման համար՝ 1500 ոսկի, իսկ գպրոցին նորոգութեանն համար 300 ոսկի ծախը կենթագրուի, նպաստամատոյց տեղական Յանձնաժողովին կողմէ շինել տրուած տաղաւարներն ալ օգուտ մը չեն ընծայեր պատսպարելու համար, զի շարունակ հեղեղանման անձրեներ անպահաս եղած են, Կառավարութիւնն ամէն աղջի կարօտելոց համար հաց, բրինձ և քիչ շատ ածուխ բաշխած էր Բայց առանգ անբաւական կնկառուին աղէտին մեծութեան հետ բազգատելով։ Ուստի առաջն. Տեղապահն իր թեմերը շրջաբերականներ հանած է, օգնութիւն ու նպաստ փութացնելու համար։ Պանտրմայէ և ուրիշ թեմերէն քիչ շատ նպաստներ դրկուած են, բայց անբաւական են օրուան թշուառութիւնն ամոքելու, Ուստի Տ. Վահան Ռ. Վ. Ա. Պատրիարքին գմութեան կոչումն կընէ։ Ա. Սրբազնութիւնն առ այժմ 40 ոսկի նպաստ մը զրկեց, ամէնէն աւելի կարօտեալ աղդայնոց բաժանուելու համար։

— Ա. Հայրապետը մասնաւոր գրութեամբ մը 2500 բուրլի գումար մը զրկած է Ս. Պատրիարքին հետեւալ կերպով բաշխուելու համար։ — 1800 ր. կարօտեալ գաւառները զրկելու համար, 500 բուրլ՝ Մշոյ Ս. Կարապետ վանքին նորոգութեան համար, որոյ մասին ինչպէս յայտնի է — բանից գրուած էր Մշոյ Առաջն. Փոխանորդ Յակոբեան Տ. Վարդան Վ.՝ ի կողմէ, Մանացեալ 200 բուրլ՝ Վարագայ վանուց Սրբանցին ի նպաստ։

Երուսաղէմ 11/22 փետր. — Երկու շարամէ ի վեր Երուսաղէմ կդտնուի Սոլլզպըրիի անզլիքան եպս. և հետարբրութեամբ կշրջագայի Փրկչական քաղաքին ու շրջակայից պատմական և նուիրական վայրերը, Կը լուսի թէ անկը եպիսկոպոսը մասնաւորապէս զրկուած է Քէնդըրապըրիի Արքեպիսկոպոսի կողմէն։ Ս. քաղաքին հիւսիսային կողմը, Պամասկոսի գոնէն գուրս նորաշէն և նզիկան եկեղեցին օրհնելու և Արեւելեան Եկեղեցեաց հետ ի մօտոյ ծանօթութիւն ունենալու համար, Եյս վերջին նպատակաւ Երուսաղէմ ժամանելուն երկրորդ օրն իսկ՝ Ս. քաղաքին անզլիքան եպիսկոպոսին ընկերակցութեամբ Ա. Աթոռս այցելելով պտտեցաւ Ս. Յակովիեանց տաճարն, և Ամեն. Սրբազնուերու հետ տեսակցելով՝ Խօսակցութիւններ ունեցաւ եկեղեցական և կրօնական խնդրոց վրայ։

— Ազգ. Հիւանդանոցի վարչական Յանձնաժողովն հաստատէ Առևնին Դանձնականներու զրութիւնն, որուն համեմատ փափաղող հայ ընտանիքներ իրենց տան մէջ պիտի ունենան զանձանակ մը, ուր պիտի ձգուին իրենց հիւրերէն կամ իրենց ընտանեկան շրջանակին անդամներէն պարբերաբար

և զանազան բարեպատեհ առիթմներով նույիրուելիք դրամներն են, և տարին անդամ մը գանձանակը՝ զբակուելով Հիւանդանոցի գրասեննեակը, հոն պիտի բացուի, և պարունակած գումարը պիտի ծանուցուի լրագրաց մէջ, և յօ դանձանակներ գեղակերտ սիրուն առարկաներ են. և տան սալոնին մէջ իրեւ զարդ կրնան դրուիլ, Առ աժմ՝ 1,000 գանձանակ պատրաստուած է, և վստահ ենք մէկ միջին հաշիւով իւրաքանչիւր գանձանակ մէկ ոսկի կրնայ արտադրել տարին:

— Ս. Պատրիարքը զիմումը ըրած է առ որ
անկ է, որ պետական վարժարանաց մէջ նոր Հայ
ուսանողներ ընդունուին։ Սոյն խնդիրը նկատողու-
թեան առնուած և պարտ ու պատշաճը տնօրինել
խոստացուած է։

— Արարկիրի Առաջն. Տեղապահ Տ. Մուշեղ
Ռ. Պ., Պատրիարքարան Նամակ մը ուղեկով, կը
ծանուցանէ տեղական Որբանոցին բացումը, Հքջակայ
տեղերէ որբեր հաւաքելն ելն., և այս առթիւ Ս.
Պատրիարքէն նպաստի Նախնական գումար մը կը
խնդրէ: Ե. Սրբազնութիւնը զրկեց օրոշեալ նպաս-
տը սցն Նորաշաստատ Որբանոցին:

— Խարբերդի Առաջնորդ Տ. Պետրոս Ռ. Վ.
Բագրատունի ևս Նամակ մ'ուղղելով ի Պատրիարքարան, կաւետէ Խուլէ-Վահրին մէջ Հաստատուած Որբանոցին բացումը, և այս առթիւ կիսնդըրէ ն. Սրբազնութենէն զրկել կանխաւ խոստացուած ամսական Եշական ոսկին: Ա. Պատրիարքը պարտ ու պատշաճը տնօրինեց ի քաջալերութիւն:

— Բաղեշէ Տ. Ակոնդ քնչյ. Յարութիւնեան
կդրէ, գովելով տեղւոյն նորահաստատ բողջքական
Որբանոցին Տեսչութիւնն որ Ա. Պատրիարք Հօր
պատուէրին ու բաղձանքին համաձայն կը շարժի,
որբերը կանոնաւորապէս եկեղեցի զրկելով ա-
մէն կիրափի և տօն օրեր, կրօնական ամէն պարտա-
ւորութիւնները կատարել տալով Ազգ. Եկեղեցւոյ
ծոցին մէջ, և կընդունի հայ կրօնուսոց Որբանոցին
մէջ, Առաջ ազգ. Քարժարանի գասատու Մելքոն
էֆ. Քաջերբունի շարաթմն անգամ մը կերթար կրօ-
նագիտութեան դաս տալու որբերուն. Հիմակ ինք
նամակագիր քահանան կերթայ, և զերմ ընդունե-
լութիւն կդանէ թէ Տեսչութենէն և թէ աշա-
կերտներէն,

— Պանայ գաւառական Խառն Ժղովին և
Առաջն. Տեղապահ Վզագատեան Տ. Ստեփան Ռ.
Ա. ընդարձակ տեղեկադիր մը զրկած են ի գատ-
րիաբարան, Աղթամարայ կաթուղիկոսակոն թե-

մերուն նկատմամբ, օրով ի մէջ այլոց, Աղթամա-
րայ թեմին մէջ գտնուող 25-ի չափ վանօրէից տը-
խուր վիճակը, ժողովրդեան կարօտութիւնն, Աղ-
թամարայ Աթոռին անշուք կացութիւնն, և չետ-
զհեաէ թափուր և աւերման վիճակի ենթարկուի-
լը շնչտելով, խնդրած են Կենդր. Վարչութենէն,
որ հաճի Աղթամարայ Աթոռոցն համար ընտրել
տեղոյն բարքն ու գիրքն ուսումնասիրած, ժողո-
վրդեան լեզուին զիտակ, և կառավարութեան ու
ազգին համակրութիւնը վայելող բարձրաստիճան
եկեղեցական մը:

— 8 փետր. Օրթա գիւղի եկեղեցւոյն մէջ
քարոզիչ Տ. Ա.ահրամ Խպիսկ. Մանկունի քահաւ
նայ ձեռնադրեց Իրբանոսեան Գրիգոր և Աւետիս
սարկաւագները. Գրիգոր կոչուեցաւ Տ. Գէորգ
արեղայ, և Աւետիս Տ. Կ.ևոնդ քահանայ, Խար-
տաւիլակութիւնը կատարեց աւագերեց Տ. Սահակ
Հայր, Տ. Ա.ահրամ Խպիսկ. պատարագ մատոյց և
քարոզ խօսեցաւ քահանայական պաշտօնի վերայ,
Ա.յա առթիւ յիշեց Էջմիածնայ Գէորգեան Ձեմա-
րանն և Երուսաղեմի ժառանգաւորաց վարժարանին
և անոնցմէ ելած կղերականները, Երեկ իրիկուն պլ
Հանդիսաւոր կերպով վեղար տուաւ Տ. Գէորգ արե-
ղայի, որ Գէորգեան Ձեմարանի շրջանաւարտներէն
է:

«ԲԻՆ ԳԱԼԻՆԻ ԽՈԼԻ»:

ԳԱՇՏՈՆԱԿԱՆԻ.

ՔԵՎԱԽԵՆ-Ք Ի ԿԱՐԴԱԿԵՏ ՎԵՀԱՓԵՐ ՀԵՅՐԵՊԵՏԵ.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն արկին Աննայի Աթամալեանց Բագռուցոյ սակա նուի իբաբերութեան 700 րուբլոյ ի արամագրութիւն Վեհ. Հայրապետի ազգիս. թ. 184:

— Օրչնութեան և գոհունակութեան
յանուն պարսնաց կը բարց Թումանեանց Դավ-
իթեցւոց՝ վաճառականաց ի Բագու սակս
նու իրաբերութեան մի հազար բուրլեաց ի
տրամագլութիւն վեհ Հայրապետի ազգիւ-
թ. 191:

— Ըսնուն սինօդի առ էջմիածնի առ ի